ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	ՀՕ-211-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2019.11.29/84(1537) Հոդ.1078	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	13.11.2019
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	26.11.2019
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30.11.2019	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2019 թվականի նոյեմբերի 13-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 9-րդ և 10-րդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենսգրքի 30.1-ին հոդվածում՝
1) 1-ին մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.
2) 4-րդ մասի ««ե» ենթակետով» բառերը փոխարինել ««զ» ենթակետով» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 33-րդ հոդվածում՝
1) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.
2) 7-րդ մասից հանել «, Ջրի ազգային խորհրդի դրական եզրակացության դեպքում,» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «Խորհրդակցելով Ջրի ազգային խորհրդի հետ՝» բառերը:

Հոդված 8. Օրենսգրքի 107-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 107. Ջրային ռեսուրսների պահպանության հսկողությունը**

Ջրային ռեսուրսների պահպանության բնագավառում ջրային ռեսուրսների օգտագործման ու պահպանության նկատմամբ պետական հսկողությունն իրականացնում են օրենքով նախատեսված լիազորված մարմինները:»:

Հոդված 9. Օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին և 3-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կառավարությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին է վերադարձնում մինչև Ջրի ազգային խորհրդի լուծարումն իր մոտ առկա ջրօգտագործման թույլտվությունների հայտերի փաթեթները՝ դրանք սահմանված կարգով գնահատելու համար: Հայտի գնահատման ժամկետը վերահաշվարկվում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին փաթեթները վերադարձնելու օրվանից:

Հանրապետության նախագահ

Ա. Սարգսյան

2019 թ. նոյեմբերի 26
Երևան
ՀՕ-211-Ն